Արձանագրություն N 2
«ՏԾԻԳ-ԲԸՀԱՇՁԲ-2016/5» ծածկագրով արտակարգ կամ անկանխատեսելի իրավիճակի առաջացման հիմքով հայտարարությունը նախապես հրապարակելու միջոցով բանակցային ընթացակարգի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան «16» դեկտեմբերի 2016թ.
ժամը 15:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Ք. Քաբաբյանը
Հանձնաժողովի անդամներ՝ Կ. Գասպարյանը և Ա.Պապյանը
Հանձնաժողովի քարտուղար՝ Գ. Թադևոսյան

Ի. Ընթացակարգի հայտերի բացման մասին
(Ք. Քաբաբյան)

ա/ սահմանված ժամկետում և սահմանված կարգի պահանջներին համապատասխան հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

1.	«Կոտայքի ՃՇՇ» ՍՊԸ	-	ՀՀ Կոտայքի մարզ,գ.Բալահովիտ, 1-ին փ., թիվ 58 E-mail: kotayqrec@rambler.ru
2.	«ՀԱԼԴԻ Քոնսալթ» ՍՊԸ	-	ՀՀ Գեղարքունիքի մարզ, գ. Նորատուս E-mail: info@haldi.am

բ/ մասնակիցների կողմից առաջարկված գները պայմանագրի կատարման համար ընդհանուր գումարով հետևյալն են.

Հ/Հ	Մասնակիցների անվանումները	Յուրաքանչյուր մասնակցի հայտով ներկայացված գները			Նախահաշվային արժեքը (ՀՀ դրամ)
		ՀՀ դրամ			
		Գինն առանց ԱԱՀ-ի	ԱԱՀ	Ընդհանուր	
1	«Կոտայքի ՃՇՇ» ՍՊԸ	58 703 928	11 740 786	70 444 714	70 499 720
2	«ՀԱԼԴԻ Քոնսալթ» ՍՊԸ	430 000	86 000	516 000	

գ/ հայտերի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն եղել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

2. Հրավերով սահմանված՝ հայտերի կազմման և ներկայացման, բացված յուրաքանչյուր հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության և դրանց համապատասխանությունը ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին.

ա) համապատասխանում է՝ «Կոտայքի ՃՇՇ» ՍՊԸ ի կողմից ներկայացված հայտը,

բ) չի համապատասխանում՝ «ՀԱԼԴԻ Քոնսալթ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը, հետևյալ հիմնավորմամբ.

- մասնակցի հայտով ներկայացված փաստաթղթերում նշված ծածկագիրը չի համապատասխանում սույն ընթացակարգի հրավերի ծածկագրին, ինչպես նաև գնային առաջարկում և հայտի ապահովման մեջ գնման առարկայի անվանումը սխալ է նշված:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

3. Գնահատող հանձնաժողովը որոշեց.

ա) «Կոտայքի ՃՇՇ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը գնահատել «Բավարար»,

բ) «ՀԱԼԴԻ Քոնսալթ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը գնահատել «Անբավարար» և մերժել, քանի որ չի համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին, համաձայն՝ ՀՀ կառավարության 10.02.2011 թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետև՝ Կարգ) 44 րդ կետի 4)-րդ ենթակետով և 45-րդ կետով սահմանված պահանջների,

4. Ներկայացված գնային առաջարկի հիման վրա հանձնաժողովը որոշեց.

ա) առաջին տեղ զբաղեցնող ճանաչել.

- «Կոտայքի ՃՇՇ» ՍՊԸ -ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

5. Գնահատող հանձնաժողովը որոշեց.

- առաջարկել ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակցին երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը,

- փաստաթղթերի գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրել ոչ ուշ, քան փաստաթղթերը հանձնաժողովի անդամներին տրամադրվելուն հաջորդող աշխատանքային օրվա ժամը 11:00-ին, ՀՀ ք. Երևան, Նալբանդյան 28, ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն 3-րդ հարկ, N 307 սենյակ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

Հանձնաժողովի
Նախագահ՝ _____ Ք. Քաբաբյան

Անդամներ՝ _____ Կ. Գասպարյան

_____ Ա. Պապյան

Քարտուղար՝ _____ Գ. Թադևոսյան